

Ինձ հանեց կյանքի հատակից իմ ազգն իր ուսերին (Հ. Շիրազ): Թաշկինակով բշուժ էր ճանճե-
րը նրա երեսից (Գ. Սևունց): Իր հիմար վարմունքով ինձ էլ կվարկաբեկի Սառայի առջև (Նար-
Դոս):

Բայի կապակցելիության բնորոշ հատկանիշներից մեկն էլ այն է. որ լրացումը կարող է լինել
պարտադիր կամ կամքնոտի բնույթի: Կամքնոտի են այն լրացումները, որոնք հատուկ են բա-
խոսքի մասի մեջ մտնող բառերին՝ անկախ նրանց բառական կամ բառախմբային իմաստներից:

Ըստ էության, դրանք իրացնում են գործողության հատկանիշները և ընթացային հանգամանք-
ները արտահայտող իմաստները, որոնք են կատարման ձևը, ենթակայի կամ խնդրի վիճակը, կա-
տարման ժամանակը, չափը, հիմունքը և այլն, այսինքն՝ պարագայական իմաստները: Կամքն-
ոտի լրացումների ճնշող մեծամասնությունը նախադասության մեջ ներառվում է հաղորդակցա-
կան նպատակադրումներով, նրանց միայն փոքր մասն է լրացում դառնում բայի բառական իմաս-
տի պահանջով, ինչպես՝ տեղի լրացումը՝ շարժման իմաստի բայերի համար (ժամանել քաղաք,
այցելել թանգարան, հեռանալ գյուղից, անցնել փողոցով և այլն), նպատակի լրացումը՝ նպատա-
կային գործողության իմաստի բայերի համար (դիմել օգնության, մեկնել սովորելու և այլն), պատ-
ճառի լրացումը՝ հոգեվիճակի փոփոխությունն ճշող բայերի համար (կարմրել ամոթից, վախենալ
խավարից, այլալիվել վեճից և այլն) և այլն:

Պարտադիր են այն լրացումները, որոնք դրվում են բայի բառական իմաստի պահանջով, ինչ-
պես՝ զրկվել աշխատանքից, պատմել կարդացածը և այլն:

Բայի կապակցելիությունը բնութագրելիս սովորաբար հաշվի են առնում հատկապես պարտա-
դիր լրացումների հնարավոր գոգորդումները: Բայը գործնականում կարող է ստանալ չորս պար-
տադիր լրացում: Այդպիսի բայերն ունեն փոխարկման (փոխել, դարձնել, փոխարկել, թարգմանել
և այլն) և նպատակադիր շարժման (ուղարկել, տեղափոխել, տանել, բերել, փոխադրել, գլորել և
այլն) ընդհանուր իմաստներ: Գործում են հատկապես վերջին իմաստախմբին հատուկ լրացում-
ներով կապակցությունները:

Այժմանք հանկարծ մոտակա ժայռից անդունդը մի քար գլորեց որով

(Հ. Թումանյան): Սովորաբար հիվանդին բուժման համար գյուղից քաղաք էին բե-
րում

(Ա. Սահինյան): Նրա հովիվ հայրը սարից տոպրակով մածուն էր ուղարկելը
նրանց

(Հր. Մաթևոսյան):

Ավելի հնարավոր գործածություն ունեն այն կապակցությունները, որոնցում լծա-
կից լրացումներից մեկը կամ երկուսը կամքնոտի բնույթի են:

Այդ տարիներին բորսայում տարիներով հերթագրվում էին աշխատանք ստանալով
համար (Ա. Սահինյան):

Մի անգամ Ալի Հաջագին մի այդպիսի բռնուցիկ տվեց իրեն կարդալու (Գ. Սևունց):
Բայը կարող է ստանալ նաև պարտադիր և կամքնոտի բնույթի հինգ լրացումներ:
Սա ըստ էության բայի կապակցելիության իրական դրսևորման սահմանային թիվն
է (վեց և ավելի լրացումներով բայական կապակցություններ գործածվում են խիստ
հազվադեպ):

Մյուս օրը Շողերը նրան իր հետ տարավ կոխոց խոտհունձի

(Հր. Մաթևոսյան): Հիմա ես էլ ուրիշների պես լույս աշխարհից հանգիստ սրտով
կարող եմ գնալ գերեզման (Գ. Սևունց): Իմ սերունդը ինձ հետ գիտի այսօր անգի-
հիսագունդը նրա բոլոր մանրություններով (Պ. Սևակ):

ԳՐԱԿԱՆ ԼԵԶԿԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՖՖՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ռ. Աետիսյան

Գրական լեզվի շրջանակներում հաղորդակցման գործընթացն իրականացվում է երկու եղանակով՝ ժո-
ղովրդական և գրական լեզվամտածողությամբ:

Մեր մշակույթի պատմության մեջ գրական լեզվամտածողության առաջին իրացնողը Բաֆֆին է, որն
իր ստեղծագործություններում (գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական) նախ՝ ավարտին
հասցրեց արևելահայ աշխարհաբարի նորմավորման ընթացքը, լեզվական այդ տարբերակին տալով
գրական որակներ, և ապա՝ առաջինն էր նաև, որ գրական լեզուն իրացրեց գրական լեզվամտածողու-
թյամբ, նպատակ ունենալով բացահայտել լեզվի գրական տարբերակի ներքին հաղորդակցման հնարա-
վորությունները:

Եթե նրա ժամանակակից շատ ու շատ ստեղծագործողներ ժողովրդայնության հասնելու համար օգտ-
վում էին ժողովրդական լեզվամտածողությունից՝ հաղորդակցման ոլորտ ներմուծելով ժողովրդական բառ
և բանը, աշխարհաճանաչողությունը, նրա ըմբռնումները, ապա Բաֆֆին առաջինն էր մեր իրականու-
թյան մեջ, որ իր ստեղծագործություններում մասնավորապես գեղագիտական խոսքում օգտվեց միայն
լեզվի գրական, նորմավորված տարբերակից՝ գրական լեզվամտածողությունն իր ստեղծագործություննե-
րում դարձնելով առաջնային պայման:

Ասվածի լավագույն ապացույցը Բաֆֆու «Մամվել» վեպն է, որտեղ գեղարվեստական խոսքի արտա-
հայտչականությունը դրսևորվել է բացառապես արևելահայերենի գրական տարբերակով և գրական լեզ-
վամտածողությամբ:

Այս ելակետից հողվածում բնության են ենթարկվում «Մամվել» վեպում գործածված գեղարվեստա-
կան խոսքի այնպիսի արտահայտչամիջոցներ, որոնք հիշյալ տեսանկյունից հաղորդակցման ոլորտում
որոշակի առանձնահատկություններ են դրսևորում:

Կրկնաստիճան պատկերավորություն: Բաֆֆու ստեղծագործություններում գեղարվեստական խոսքը
այլեւայլ որակների հետ աչքի է ընկնում մի յուրահատկությամբ ևս. այդ այն է, որ հեղինակը պատկերա-
վորման որևէ միջոց կերտելիս հաճախ նրա հիմքում գործածում է խոսքի պատկերավորման մեկ ուրիշ մի-
ջոց, և դրանով ստեղծվում է մի տեսակ կրկնաստիճան պատկերավորություն:

Այսպես՝ «Յուր պղնձյա ամրակուտ գրահավորության մեջ, յուր գեղքերի շողշողուն փայլով, հրդեհնե-
րի վառ ճառագայթների առջև փայլում էր նա յուր անվան համեմատ, որպես մի արեգակ յուսապայծառ
որ աչք էր շլացնում» (266): Հեղինակն այստեղ ստեղծել է մի գեղեցիկ համեմատություն. գրահավորված
Մերուժանի արտաքին փայլը համեմատելով արեգակի հետ՝ աշխատելով ասելիքն ավելի ընդգծված ներ-
կայացնել և առավել չափով գրավել ընթերցողի ուշադրությունը: Մյուս կողմից՝ այդ համեմատությունը
ձևավորվել է՝ իր հիմքում ունենալով չափազանցություն:

Նմանատիպ յուրահատկություններ ունեն նաև հետևյալ օրինակները. «Նա կայծակի նման անցնում
էր մեկ փողոցից դեպի մյուսը, երբ նկատում էր, որ պարսիկները այն կողմում թուլանում են» (268), «Նա
էր մեկ փողոցից դեպի մյուսը, երբ նկատում էր, որ պարսիկները այն կողմում թուլանում են» (304), «Հավա-
գալիս էր, որպես մի մորկածուկ հեղեղ, ամեն ինչ ողողելու, ամեն ինչ ոչնչացնելու համար» (423), «Հավա-
գալիս էր, որպես մի մորկածուկ հեղեղ, ամեն ինչ ողողելու, ամեն ինչ ոչնչացնելու համար» (423), «Նա յուր արկանով այնպես կաշկանդեց ուժեղ անասունին, որպես ճանճը կաշկանդվում էր սար-
դոստայնի մեջ» (451) (նվազաբանություն), «Նա ձեռքը տարավ դեպի նետը, որ տակավին մնացել էր ցց-
ված ագորի մեջ, բարկությամբ դուրս քաշեց: Արյունը սկսեց վտակի նման հոսիլ» (464) և այլն:

Ընդհանրապես գեղարվեստական այս կամ այն արտահայտչամիջոցի կազմում մեկ այլ արտահայտ-
չամիջոց գործածելը Բաֆֆու գեղարվեստական խոսքի յուրահատկություններից կարելի է համարել: Այս-
պես՝

ա) Համեմատությունների հենքի վրա ձևավորված փոխաբերություններ՝ «Իսկ ես հագիվ կարողացա
հասցնել ինձ իմ տիրոջ մոտ, որպես կենդանի նամակ» (18), «Հունաց կայսրը մեկ կողմից, պարսիկ ար-
քան մյուս կողմից, երկու ազգաի վիշապների նման, բերանները բաց արած, մաքառում էին միմյանց հետ,
թե որը շուտ կկլանե անտեր մնացած երկիրը...» (22), «Ի սեր աստծո, առանց այդ ավերորդությունների,
պատմիր, ինչ որ ասելու ունես, դու կարող ես վստահել, որ ես կնոջ նման արտասուք չեմ քափի» (42),
«Վերջին խոսքը այնպիսի մարդու ձայնով արտասանեց փոքրիկ երիտասարդը, որ նետի նման զգվեցավ
մեծափառ պարթևի սրտում» (67), «Հայաստանը, մի կոշտ ոսկորի նման, մնացել էր նրա կոկորդում» (72),

«Ինքը նույնպես մի ժամանակ մի ամբողջ աշխարհի լուսավորության արեգակն էր...» (169), «Երկար լուսարտասուքը հեղեղի նման հոսում էր նրանց աչքերից» (254), «Շուկան յուր բոլոր հարստությամբ վառվում էր, որպես մի շորի կտոր» (256), «Նա խելքի և իմաստության մի մեծ ծով էր» (295), «Ներքինների մի ստվար բազմություն հսկում էր գեղեցկության և փափկության այդ անմատչելի թանգարանի վրա» (314), «Նրա փառավոր վրանը հեշտության մի դրախտ էր» (341), «Գերիներից յուրաքանչյուրը, որպես մի մարմնագած վրեժխնդրություն, հարձակվեցավ պահապան զինվորների վրա» (493), «Աշխատանքը սկսում է եռ գալ, որպես եռ է գալիս ներշնչված գետինը» (504) և այլն:

բ) Անճնավորման հենքի վրա ձևավորված փոխաբերությունները՝ «Ձայրագած էր այս առավոտ Արա-ծանին» (15), «... Բարձր աշտարակները դարերով մարտնչում էին բնության արհաւիրքի և թշնամու հարձակման դեմ» (15), «Ավելի քաղցր մրմնջում էր լեռնային գետակը, որ շտապով վազում էր թխապատ ափերի միջով» (56), «Նախորդ օրվա հորդ անձրևից ծառերը վազվել էին, մաքրվել էին և սրանցիցի պշտանքով փայլում էին իրանց կոկիկ տերևներով» (57), «Ծովը լուռ էր», «Ծովը» վաղուց կրկին կույ տված կլինե-նրան, եթե նրա (կղզու) վրա բնակվելու չլինեք մի սրբազան անճնավորություն» (189), «Աղբյուրը... ցած էր թափվում և, համբուրելով ու զրկվելով յուր ուղին գարդարող գույնզգույն խճերի հետ, արագ վազում էր» (245), «... Կարմիր քամին կատաղությամբ մոնչում էր» (460), «Քամու ուժգին հոսքի ներքո դալար թուփե-րը հեծելով, հառաչելով կայում էին գետնին» (463), «Այդ միջոցին զարմացած Արաքսը խորին վրդովմունքով դուրս էր հարձակվում յուր ափերից» (463), «Բնությունը սրանչանում էր, փառավորվում էր յուր վա-ղորդյան հրճվանքով» (466) և այլն:

գ) Անճնավորմամբ ձևավորված ակնարկ, ենթատեքստ, այլաբանություն.

«Արաքսի որոգայթներ» գրքում Բաֆֆին անճնավորում է Արաքսը և մի ընդարձակ պատկեր է նվիրում հայոց մայր գետի վարքին, երբ նա հոսում է լեռնոտ և տափակ տարածություններով: Այդ նկարագրու-թյունն արտաքինապես սովորական տպավորություն է թողնում ընթերցողի վրա, բայց երբ խորանում ենք հեղինակի ասելիքի մեջ, ապա նկատում ենք, որ այն այլաբանական բնույթ ունի:

Ահա այդ հատվածը. «Հին Արաքսը զարմանալի որոգայթներ ուներ: Նա և զարմանալի քմահաճույթ-ներ ուներ: Անհիշելի ժամանակներից համառությամբ կոպում էր յուր անհավասար եզերքի հետ և կարծես դժգոհ էր այն նեղ շավիղից, որ գծել էր նրա ընթացքի համար նույնքան քմահաճ բնությունը: Նա սիրում էր ընդարձակություն, սիրում էր ազատություն: Նեղ շավիղը վրդովեցնում էր նրան: Երբեմն լեռնային եր-կու զուգահեռական գոտիներ միաբանվում էին և սեղմում էին նրան իրանց անձուկ և խորին ձորակի մեջ: Այդ միջոցին նրա կատաղությունը չափ չուներ: Ահռելի հորձանքներով զարկվում էր յուր ապառաժոտ ա-փերին, գոռում էր, գոչում էր, փրփրում էր և մարդ, կարծես, լսում էր նրա սոսկալի որոտմունքի մեջ այս ճա-կատագրական խոսքերը. «Նե-դ է... մե-դ է... խեղդվո՛ւմ եմ...» (438):

Այս հատվածը անշուշտ առարկայի անճնավորման լավագույն օրինակ է, բայց ուշադիր ընթերցողը կարող է նկատել, որ սա ոչ թե սովորական, այլ այլաբանական նկարագրություն է, որն իր մեջ ներթափանցում է ենթատեքստ ունի. այս նկարագրության մեջ Արաքս գետի անճնավորմամբ հեղինակը ներկայացնում է Հայաստան աշխարհի քաղաքական իրավիճակը՝ իր անվերջանալի պայքարով ու հերոսական մաքա-ռումներով: Մեր ասածը հաստատվում է ընդամենը մի քանի պարբերություն հետո, երբ հեղինակը գրում է. «Եվ իրավ, Արաքսը ներկայացնում է յուր աշխարհի քաղաքական դրությունը: Երբ խորամանկ պար-սիկը և նեղավոր հռովմեացին, երկու լեռնային գոտիների մասն, միաբանելով ճնշում էին նրան, այդ մի-ջոցին նրա ճիչն ու բողոքը սահման չուներ: Յուր բոլոր կատաղությունը գործ էր դնում՝ ազատվելու նրանց ճնշումից: Իսկ երբ երկու դաշնակիցները քանդում էին իրանց միաբանությունը, բաժանվում էին, և նա ա-զատություն էր գտնում, այդ միջոցին սկսում էր զբաղվել ներքին երկպառակտություններով» (439):

Այսպիսով, Արաքս գետին վերաբերող նկարագրությունը մի գեղեցիկ և տեղին օգտագործված այլա-բանություն է, որ ստեղծվել է գետի անճնավորման հիման վրա:

դ) Զուգահեռությամբ ձևավորված հակադրություններ:

Պետք է նկատի ունենալ, որ զուգահեռությունը երբեմն կարող է հանդես գալ, որպես գործողություննե-րի, երևույթների հակադրություններ՝ Երեք օր հետո դուրս եկան Ողական ամրոցից երկու եղբոր որդինե-րը: Սամվելը առավելության, յուր փառավոր ասպախումբով, հանդիսավոր կերպով: Իսկ Մուշեղը՝ գիշերով, միայն երկու զինվորականների հետ, գաղտնի կերպով...» (148):

Ինչպես երևում է, հատվածում հակադրությունները ձևավորվել են զուգահեռության գործադրմամբ: Զուգահեռության հիմքում մնան հակադրությունները կարող են ձևավորվել լեզվական այնպիսի միա-վորների միջոցով, որոնք հակադրության իմաստ են արտահայտում: «Սամվել» վեպում գործածված այդ-պիսի միավորներից է հակադրության հարաբերություն արտահայտող իսկ համադասական շաղկապը. «Լամը պաշարված էր: ... Նա պաշարված էր այն լեռնականներից, որպես մի ժամանակ դժբախտ Տրո-յան պաշարված էր հելլենացիներից: Նախանձախնդիր հելլենացին կռվում էր գեղեցիկ Հեղինեի պատվի համար, որին յուր թագավոր ամուսնի հյուրասեր տնից հափշտակեց ամամոթ տարիաժամ: Իսկ ոչտու-

նիները կռվում էին իրանց աշխարհի սիրելի տիկնոջ համար, որին անգութ ձեռքով հափշտակեց եղբայ-րը» (255):

Կամ՝ «Բարկությունը խեղդում էր նրան, երբ մտաբերում էր վաղեմի ժամանակները: Եղել էին օրեր, երբ նա հաղթական փառքով վերադառնում էր պատերազմից, այդ փողոցի հատակը ծածկված էր լինում ծա-ղիկներով ու կանաչ տերևներով: Իսկ այժմ նրանց փոխարեն մոխիր էր ցանաժ դռների ճակատները զար-դարված էին լինում գորգերով, թավիշներով, գույնզգույն կերպասներով և ամենագեղեցիկ գործվածքնե-րով: Իսկ այժմ ոչ մի ձայն չէր լսվում» (287) և այլն:

Զուգահեռությամբ հակադրություն է ստեղծվում նաև հակառիշ իմաստ ունեցող բառերի գործածու-թյամբ. «Նա նստած էր յուր դատարկ մենաստանում, բայց նրա տխուր մտածողությունները հաժում էին երբեմն դեպի արևելք, երբեմն դեպի արևմուտք: Այնտեղ, արևելքում, Անուշ բերդի մթին նկուղների մեջ աք-սորված էր թագավոր - ամուսինը: Այնտեղ, արևմուտքում, բյուզանդական պալատի սպանիչ փափկու-թյան մեջ, պահված էր թագածառանգ որդին» (381):

Ինչպես երևում է հակադրությունն ավելի ընդգծելու նպատակով դերանունների հետ համատեղ գոր-ծածվել են արևելք, արևմուտք հակառիշ բառերը:

Ուրիշ օրինակ. «Այնտեղ յուր քաջերին ոգևորում էր մայրը, այստեղ՝ որդին: Այստեղ պատրաստվում էին ազատելու գերյալներին, այնտեղ պատրաստվում էին ի տար աշխարհս վարելու», «Մեկը բարձրաց-նում էր Հիսուս Քրիստոսի փրկարար խաչը, մյուսը՝ զրադաշտ ճանաչավոր արեգակը», «Կռիվը մոր ու որդու միջև էր: Մայրը առաջնորդում էր Հայոց երկրի անճնանվեր զավակներին: Որդին առաջնորդում էր Հայոց երկրի արյունաբեր թշնամիներին» (482):

Վերջին օրինակում մայր և որդի բառերը, թե՛ն հակադիր իմաստներ չունեն, բայց տվյալ բնագրում հանդես են եկել որպես հակառիշներ:

Գեղարվեստական խոսքը նույնատիպ բովանդակություն է պահպանում նաև այն դեպքում, երբ հիշյալ միավորների հետ գործածվում է նաև միջև ժամանակային տևականության իմաստ ունեցող շաղկապը. «Միջև այստեղ կոփվե յուր սարսափելի գործածության մեջ էր, բանակի մյուս կողմում, իրանց Գարեգին նահապետի առաջնորդությամբ մարտնչում էին Ռշտունցիք» (489), «Միջև հայր և որդի սուր հոգեւտանջ լուռության մեջ էին, որ ամեն վայրկյան պատրաստ էր պայթելու, պատանի Արտավազդը կղզու մյուս կող-մում հրաշքներ էր գործում» (453):

Հակադրություն են ստեղծում նաև զուգահեռության տարբեր մասերում կրկնվող լեզվական որոշ միա-վորներ: Այսպես, հետևյալ հատվածում կրկնվում է այդ բանակը բառակապակցությունը, և դրանով հա-կադրություն է ստեղծում զուգահեռության երկու տարբեր մասերի միջև: «Բայց այդ բանակը չէր ներկա-կադրություն է ստեղծում զուգահեռության երկու տարբեր մասերի միջև: «Բայց այդ բանակը չէր ներկա-կացնում սովորական բանակների, այն ուրախ, այն զվարճալի կենդանությունը, որով նա յուր ներքին վա-յելությունը խառնում է հասարակաց բանականության հետ... Այդ բանակը, որպես մի կործանող և ապա-կանող հրեշ, յուր շուրջը անապատ էր դարձրել և ինքը ապրում էր խորին ամայության մեջ» (418-419):

Կամ՝ «Ոչ ոք չէր մերձենում նրան, և ամեն ոք փախչում էր նրանից» (419) և այլն:

Կրկնություն: «Մամվել» վեպում պատկերավորություն ստեղծվում է նաև խոսքի շարահյուսական յու-րահատկություններով պայմանավորված լեզվական արտահայտչական միջոցներով: Այդպիսի միջոցնե-րից առանձնապես տարածված է կրկնությունը, որի գործածության նկատմամբ առանձնակի հակում ու-նի հեղինակը: Այստեղ կրկնությունները նպատակ են հետապնդում առարկայացնել, ընդգծել ասելիքը և դրանով ընթերցողի ուշադրությունը հրավիրել հաղորդվող նյութի վրա:

Ահա թե նա ինչպես է նկարագրում Սամվելի երիտասարդ ծառաներից մեկին. «Պատանին լավ հագն-ված սենեկային մանկլավիկի տպավորություն էր գործում: Ծիածանի բոլոր գույները կային նրա հա-գուստների վրա»: Ավաճակ կարծեք չի բավարարվում հեղինակը և, որպեսզի ընթերցողին համոզի, որ ե-րիտասարդի հագուստը իսկապես ծիածանի գույներն ունի՝ իր ասելիքը շարունակում է այսպես. «Գունա-վոր էր գլխի թեթև ապարոշը, որ թեք կերպով կապած էր թասակի վրա... գունավոր էին նրա երկար, ոսկյա զանգուրները, որ սփռված էին ուսերի վրա. գունավոր էր բեհեզա գոտին, որ... Ծածանվում էր ծնկների վրա. գունավոր էր բաճկոնակը... գունավոր էին նրա մախշուն տրեխները, որ պատրաստված էին գույնզ-գույն մետաքսյա թելերից...» (24):

Այստեղ այդքան նպատակադրված հաղորդվող միտքը ավելի ընդգծված է ներկայացված, և ընթերցողի ուշադրությունն էլ բևեռվել է հենց այդ մտքի վրա:

Նույնպիսի եզրակացություններ կարելի է անել հետևյալ հատվածի կրկնվող միավորներից. «Ոչ ոք չէր երևում: Ամենուրեք տիրում էր տխուր, անապատական դատարկություն: Դատարկ էին քաղաքները, դա-տարկ էին գյուղերը, դատարկ էին ճանապարհները» (396):

Այդպիսի կառույցների կարելի է հանդիպել նաև «Կայծեր» վեպում. Տարոնի՝ հայոց ամենամեծ աշխարհներից մեկի ամայացումը հեղինակը նկարագրում է պատմական էքսկուրսներով, ասելով «Չկար Կավ - Կավ կոչված ամրաշեն քաղաքը, իր անառիկ Ողական բերդով:

Նկատելի է, որ տեքստի մեջ լեզվական կրկնություններ կան:

«Մամվեր» պատմավեպում Բաֆֆին չորրորդ դարի գունավորումն ստեղծելու նապատակով օգտն
ծում է բոլոր հնարանքները՝ գրաբարյան բառապաշարից ընտրելով սոցիալական, վարչական, կր
կան բնույթի տերմիններ ու բառեր, ինչպես՝ սեպուխ, նախարար, բուրմ, մոգ, մեհյան, ատրուշան, մե

նի, իշխան, մարդպետ, տակառապետ, տաճարապետ, սպարապետ, ոստանիկ, բագին, դաստակերս կանանոց, ողջակեզ, մագաղաթ, հրովարատակ, պատրիկ, պատրկաց պատրիկ, հաշտից տաճար, ալ պահումը, այրումի և այլն: Նման ձևով հեղինակը ընթերցողին տեղափոխում է չորրորդ դարի պատմական հերոսների միջավայրը և մասնակից դարձնում նրանց գործողություններին:

Պատմաբանների տեղին գործածությունը նպաստում է դարաշրջանի վերակենդանացմանը: Օրինակ այսօր մեզանից ոչ մեկը չի ասում գեղջուկ կամ շինական, այլ միայն՝ գյուղացի, մինչդեռ Բա.Ֆ.Ֆին «Արաբատյան դաշտի առավոտը» գլխում գործածում է վաստակարեկ շինական արտահայտությունը և ոչ գյուղացի, որով մենք չորրորդ դարի իրադարձությունների մասնակից լինելու պատրանքն ենք զգում: Այնույն նպատակով Բա.Ֆ.Ֆին շեմք բառի փոխարեն գործածում է սլամ, զինված ձիավորների փոխարեն ասպախումբը, հեծելագործի՝ այրուծի, թագավորի՝ արքա, պարսիկների՝ արիք, տերերի՝ տյարք, ցերեկ բառի՝ տիվ, իսկ արև, արեգակ բառերի փոխարեն՝ տվնջյան լուսատու և այլն:

Հեղինակի լեզվում կան նաև գրաբարյան ոճեր ու արտահայտություններ, օրինակ՝ աջ ու ձախ ասելու փոխարեն գրում է աջ և ահյակ, մեկ առ մեկ-ի՝ մի քստ միոցե հատկապես հակում է ցուցաբերում գրաբարյան անցյալ դերբայի գործածության (տառապլալ, տալալ կրճատյալ, գերյալ և այլն): Նրա սիրած ձևերից են նաև հունագ, ասորագ, արյագ, նախահարգ, ընտանյագ, հայելվո, հակամալիգ, տեղորայք (վայրեր) և այլ գրաբարաբանությունները:

Բնության բանաստեղծացումը: Անգուզական է Բա.Ֆ.Ֆին նաև որպես բնության երգիչ: Բա.Ֆ.Ֆու բոլոր ստեղծագործություններում առանց բացառության մենք անպայման կհանդիպենք բնության բանաստեղծացման. նրա երկերում բազմաթիվ անգամ արշալույսներ ու վերջալույսներ են նկարագրվում, դաշտեր ու դաշտը: Մի թիվ անմշակ տեղ չէր երևում: Դեպի ամեն կողմ հասունացած հունձը ոսկյա ալիքներով ծածկում էր, ծավալվում էր խորին բերկրանք պատճառում...» (հ. 6., 387), «Ստորոտում ծփում էր լայնածավալ կը շնչում էր մետաքսանման փափուկ խտտերի վրա, և երեկոյան ճառագայթներից լուսավորված փայլուն ծղոտները հանդարտ կերպով տատանվում էին, ծածանվում էին և իրանց բաց - կանաչագույն ալիքներով վախենալով, մի գուցե խանգարեն ծաղիկների խորհրդավոր խաղաղությունը» (հ. 6, 293):

«Փոքորկային գիշերին հաջորդեց խաղաղ, լուսապայծառ առավոտը: Բնությունը սքանչանում էր, փասատուի հանդիսավոր ելքը: Ամենուրեք շնչում էր անսպառ հաճություն: Ամենուրեք տիրում էր անթառամ զվարթություն» (466-467) և այլն:

Այսպիսով ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 19-րդ դարի 70-80-ական թվականներին գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցները բազմապիսի դրսևորումներով իրենց լիարժեք արտահայտությունն են գտել Բա.Ֆ.Ֆու գեղարվեստական ստեղծագործություններում, մասնավորապես «Մամվել» պատմավեպում:

Մյուս կողմից, պետք է նկատի ունենալ, որ գեղարվեստական խոսքը հեղինակի գործերում արտահայտվել է արևելահայ գրական նորմավորված աշխարհաբարով, որտեղ լավագույնս բացահայտվել են կան խոսքակառուցման ասպարեզում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրական և ժողովրդական լեզվամտածողությունների մասին մանրամասն տես՝ Ռ. Գ. Ավետիսյան, Լեզվի գործառական տարբերակների բովանդակության և արտահայտության պլանների փոխհարաբերության հարցի շուրջ. ՀՀ ԳԱԱ «Լրա» 1984) գրքից: Փակագծերում նշված են միայն համապատասխան էջերը:
2. Այս գլխի հեղինակային բոլոր օրինակները բաղված են Բա.Ֆ.Ֆու «Մամվել» («Սովետական գրող» հրատարակչություն, Ե. 1984) գրքից:
3. Դրանք հիմնականում հատուկ են չափածո խոսքին:
4. Հմմտ. էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 էջ. 268, էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրական-նագիտական բառարան, Ե. 1972., էջ 90:
5. Հնարանությունների և պատմաբանների մասին մանրամասն տես՝ Դ. Առաքելյան և ուրիշներ, Ժամանակակից Հայոց լեզու, հ. 1, Ե., 1979, էջ 233-235, Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982, էջ 206-209:

ՇԱՐԱՀԱՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ. ՍԵՎԱԿԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Ինգա Գևորգյան

Պ. Սևակի չափածոն բազմիցս դարձել է ուսումնասիրությունների նյութ. թեղ գրականագետները, թեղ լեզվաբանները իրենց հիացական խոսքն են ասել այդ չափածոյի մասին. հրապարակի վրա կան բազմաթիվ գրքեր ու հոդվածներ՝ նվիրված Պ. Սևակի չափածոյի քննությանը:

Պ. Սևակի բանաստեղծության լեզվական արվեստը ևս ուսումնասիրված է, սակայն մասնավորապես շարահյուսական համակարգը ներկայացնող առանձին և մանրաքննի աշխատություն չկա: Մեր աշխատանքը նպատակ ունի բացահայտելու շարահյուսական համակարգի որոշ առանձնահատկություններ, որոնք կան Սևակի չափածոյում:

Ստորև ներկայացվող շարադրանքում մասնավորապես անդրադարձել ենք շարահարական կապակցությանը բարդ համադասական նախադասություններին:

* * *

Բարդ համադասական նախադասությունը մի կառույց է, որի բաղադրիչ նախադասությունների միջև առկա է համադասական հարաբերություն, այսինքն՝ բարդության մեջ մտնող բաղադրիչներից մեկը ոչ՝ քերականորեն, ոչ՝ իմաստային առումով չի կապվում կից բաղադրիչի որևէ անդամի հետ, այլ կից նախադասության հետ՝ ամբողջությամբ:

Բարդ նախադասության նվազագույն կառույցը երկբաղադրիչ է: Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալները կարող են արտահայտել և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա գործողություններ: Համաժամանակյա գործողություններ ասելիս նկատի ունենք, որ երկու և ավելի համադաս բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների արտահայտած գործողություններն ու եղելությունները միաժամանակ են կատարվում:

օր՝. Ես գիտեի հաստատ, Ես գիտեի վաղո՛ւց / III, 161: Այստեղ և այսուհետև ներկայացվող օրինակները բաղված են Պ. Սևակի «Երկերի ժողովածուից» 1-6 հատորներ, Երևան, 1972-1976թթ.:

Տարաժամանակյա գործողություններ ասելիս նկատի ունենք, որ համադաս բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների արտահայտած գործողություններն ու եղելությունները կատարվում են հաջորդաբար:

օր՝. Նորից ակամա ելնում եմ փողոց, Մանրող հայացքով իմ շուրջն եմ նայում (III, 155):

Բարդ համադասական նախադասությունները, ըստ բաղադրիչների միմյանց նկատմամբ ունեցած իմաստային հարաբերության, ներկայացնում են բաց և փակ շարքեր: Սովորաբար ազատ, ըստ խոսողի կամ հեղինակի հայեցողության է ձևավորվում շարքի առաջին բաղադրիչը, իսկ մյուս բաղադրիչի կամ բաղադրիչների պարզ ստորոգյալի կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույցի եղանակաժամանակային ընտրությունը թելադրված է լինում առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալի եղանակից և ժամանակաձևից:

Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցումը, ինչպես հայտնի է, կարող է կատարվել երկու եղանակով՝ գոդով և շարահարությամբ:

Բարդ համադասական նախադասության բաղադրիչ անդամները շարահարությամբ են կապակցվում առավելապես բաց շարքերի առկայության դեպքում:

Հիշենք, թե ինչ է ասել Մ. Աբեղյանը շարահարությամբ կապակցված բարդ համադասական նախադասությունների մասին. «Պետք է նկատել, որ շարահարությամբ կապակցությունը շատ լույծ է լինում. դասությունների մասին. «Պետք է նկատել, որ շարահարությամբ կապակցությունը շատ լույծ է լինում. միջի դադարի երկարելով՝ համադաս խեղճերը /նախադասությունները-Ի. Գ./ հեշտությամբ կարող են իրարից բաժանվել և կազմել անկախ ասացվածքներ»:

Այժմ անդրադառնանք Պ. Սևակի չափածոյում հանդիպող անկախ շարահարությամբ բարդ նախադասություններին, պարզենք դրանց կառուցվածքային, ոճական և այլ հատկանիշները:

Նշենք, որ բարդ համադասական նախադասության դասակարգումը կատարում ենք ըստ Աբեղյանի, այսինքն՝ երկաստիճանության սկզբունքով: